Ս.ՇՏԻԿՅԱՆ

ԱՅՍ ԱՄԵՆԸ ՎԱՂՈՒՑ ՉԷՐ...

Հորս ծննդավայրը՝ Վանը և Շատախը՝ մորս ծննդավայրը մեր տանն էին լինում հիմ–նականում կիրակի օրերին: Դանդաղ ու հանդարտ ծայր էր առնում պատմությունը «Էրգրի» մասին, 1915 թվականի կռվի ու կռվողների մասին, պատմվում ու վերապատմվում էին այդ եղելությունների այլևայլ դրվագներ, վերհիշվում էին կռվողների, հերոսների սպանված–ների, գաղթի ճանապարհին զոհվածների, կորածների անունները...

Եվ չնայած Վանն ու շատախը շատ էլ բարեկամաբար չէին տրամադրված իրար հանդեպ, քանզի շատախցիք «գեղական էին» ըստ վանեցիների, ովքեր, իհարկե, քաղաքա–ցիներ էին, այնուամենայնիվ մի ընդհանություն ունեին նրանք. նահապետական, անապակ պարզամտությունն էր դա, որ նրանք բերել էին երկրից, որը մնացել էր անկեղծ ընդհուպ մինչև իմ ժամանակները: Ամեն նորության վրա նրանք զարմանում էին հիմնավորապես, զարմանում էին ի խորոց սրտի և հաճախ թվում էր...

Բայց ավելի լավ է՝ պատմեմ:

* * *

Սահակ աղան, փոքրամարմին, սպիտակ մորուքով ու քչախոս մի մարդ, Վանի ու Շատախի մոտ մյունխհաուզենյան տիպի ստախոսի համարում ուներ: Դարասկզբին նա եղել էր Ամերիկայում, և երբեմն որոշ եղելություններ էր պատմում այդ երկրի մասին: Եվ այստեղից էլ սկսվում էր...

- Ամերիկա հարյուր հարկանի շենք կա:

-Վա՜յ, քո տուն ավեր չելի, – լիաթոք ծիծաղում էին Վանն ու Շատախը, – Սահակ աղա, սուտ-սուտ՝ էդքան է՞լ սուտ: Հարյուր հարկ որ կասես, ո՞նց են շարե, ոնց կելնեն, ոնց կիջնեն, էլ էլ՝ օր մի քանի անգամ:

-Սահակ աղա, կնիկ որ բեռը ձեռին շուկայից գա, էն քանի՞ սհաթ պիտի էլնի, որ տուն հասնի...

-Ոտով չեն ելնե, – աշխատում էր իր ասածն առաջ տանել Սահակ աղան, – պստիկ սենյակ կա, կմտնեն մեջ, դռներ կկոծեն, սենյակ կթռնի վերև...

-Սենյա՜կ, – հոմերական ծիծաղով արձագանքում էին Վանն ու Շատախը, – Սահակ աղա սենյակ կթռնի՞, աղունի՞կ ի: Սահակ աղա, մեզ երեխաներաց տե՞ղ կդնես...

Եվ ծիծաղում, լիաբուռն ու լիաբերան ծիծաղում էին Վանն ու Շատախը:

Պատմածս իրողությունը վերաբերում է 30-ական թվականներին: Սահակ աղան հենց այդ թվականներին էլ մահացավ: Իսկ բոլորովին վերջերս «Արմենիա» հյուրանոցի մոտ հանդիպեցի այն մարդկանցից մեկին, ով ժամանակին լիաթոք ծիծաղողների թվում էր: Եվ հանդիպեցի հյուրանոցի վերելակին սպասելիս:

Նայեցինք իրար, հասկացանք ու ժպտացինք՝ մի տեսակ մեղավոր: Եվ ասես նախո–րոք պայմանավորված՝ հոգոց հանելով արտաբերեցինք.

-Հե՜յ գիտի, Սահակ աղա...

* * *

Մկրտիչն ու Պետրոսը՝ երկու տարեց և հարգելի շատախցիներ, մեր տուն եկան այն ժամանակ, երբ հայրս պատին էր ամրացնում «ՈՒրախ ընտանիք» մակագրությունն ունեցող մի պլակատ. ընտանիքի հայրը՝ ռադիոյի ականջակալներն ականջին դրած, ժպտալով թոցնում է իր փոքրիկին: Նրա կողքին դարձյալ ականջակալներով՝ կանգնած էր մայրը:

-Արշո, էս ականջներուն ինչ են դրած, – անհապաղ հետաքրքրվեցին հյուրերը:

-Ռադիո է, – բացատրեց հայրս, – նվագ են լսում և հայրը պարացնում է երեխային:

Զարմացան ու ցույց տալով ականջակալները՝

-Էդ բանի մեջ ձեն կա՞:

Հայրս կրկին բացատրեց. այո, կա, ոչ միայն ձայն, այլև երաժշտություն, սրանով կարելի է հաղորդումներ, զրույցներ, լուրեր լսել: Մի խոսքով՝ ռադիո է և դա կլինի այսօր-վաղը:

-Իսկ ձեն որտեղի՞ց կլցվի էդ ականջի բաներաց մեջ:

Հայրս պլակատի վրա ցույց տվեց լարերը:

-Ջանըմ, էդ թելերաց միջով ձեն կանցնի՞: Ո՞նց կանցնի:

Խոսակցությունը երկարեց, բորբոքվեց, երկու կողմերն էլ սկսեցին փաստարկներ բե–րել և, ի վերջո, հնչեց Մկրտչի վերջնական եզրակացությունը.

-Կելնի, որ էդպես բան էլնի, բայց ո՜վ գիտի երբ:

-Մեր թոռնծոռներաց օրով կելնի, – ամփոփեց Պետրոսը:

... Իսկ երբ քեռի Պետրոսի դուստրը վերջերս իրենց հին հեռուստացույցի փոխարեն նորը գնեց, նա դժգոհ փնթփնթաց.

- Համբերեիր չէ՞ր էլնե: Վաղ-մյուս օր գունավորը կելներ՝ կառնեիր, էլի...

* * *

Վանն ու Շատախը հուզվեցին ու անհանգստացան, ալեկոծվեցին հիմնիվեր: Պատ–ճառն այն էր, որ հորեղբայրս նոր ռադիոընդունիչ էր գնել, այն էլ՝ ամենակատարելագործ–վածը՝ «Տե-շեստ»:

Իհարկե, մինչև այդ էլ ռադիոընդունիչը նորություն չէր, Վանն ու Շատախը հաճախ էին հավաքվում հորեղբորս տանը և լուրեր լսում հնամենի «Սի»-ով: Բայց «Սի»-ն անշուք էր, փոքրիկ, աղմկոտ և, որ կարևոր է, կայաններ բռնելու շատ փոքր շառավղով: Եթե չեմ սխալվում, «Սի»-ն Մոսկվա անգամ չէր կարողանում բռնել: Իսկ «Տե-շեստը»...

... Իր «Տե-շեստի» բացարձակ առավելության գիտակցությամբ հորեղբայրս հանդի–սավորությամբ միացրեց ընդունիչը, և ցուցատախտակը լուսավորվեց: Վանի ու Շատախի համար սա արդեն զարմանալի էր: Զարմանքն իր գագաթնակետին հասավ, երբ հորեղբայ–րը ցուցատախտակի վրա սկսեց կարդալ այն քաղաքների անունները, որոնք բռնում էր «Տե-շեստը». Լոնդոն, Փարիզ, Մոսկվա, Մադրիդ, Պոլիս, Հռոմ: Կային քաղաքներ էլ, որ Վանն ու Շատախը լսում էին առաջին անգամ և հասկանալի է, որ դա է՛լ ավելի էր մեծաց–նում ընդունիչի միահեծան համարումը. Լիվորնո, Բուենոս-Այրես, Ամստերդամ...

-Հիմա էդ որտե՞ղ ես բռնե, Համո, – հաղորդումը լսելու ընթացքում մերթ ընդ մերթ հարցնում էին ներկաները:

Հորեղբայրս նայում էր ցուցատախտակին.

-Սա Հռոմն է:

-Իսկ է՞դ որն ի:

-Սա Ջենովան է, Իտալիա այսինքն:

-Յաա՛...

Սակայն հորեղբորս «Տե-շեստի» անսահման հեղինակությունը միանգամից ընկավ հետևյալ դեպքից հետո: Մի երեկո, երբ Վանն ու Շատախը ներքին հուզմունքից փայլող դեմքով ինչ-որ հաղորդում էին լսում, ռադիոընդունիչը հանկարծ արտաբերեց. «Գուդ մոր–նինգ»:

-Յա, կասի բարի լույս, – իրար անցավ Ռուբեն աղան: Նա Վանում աշխատել էր ամե–րիկյան ինչ-որ ընկերությունում և մի քանի բառ գիտեր անգլերեն, – Համո, գիշերով էս ոնց կասի բարի լույս:

Եվ հուզվեցին, ալեկոծվեցին Վանն ու Շատախը...

Հորեղբայրս համատարած աղմուկի մեջ փորձեց ինչ-որ բան բացատրել ժամային գոտիների մասին, բայց նրան լսող չեղավ:

-Ջանըմ, մեկ-երկու սհաթ՝ կհասկանանք, բայց կես գիշերով ասեն բարի լո՞ւյս:

-Ով գիտի էս «Տե-շեստը» ինչ օյին է:

-Չելավ, չելավ Համո:

Դրանից հետո շատ վանեցիների ու շատախցիների հանդիպելիս, եթե խոսք էր բաց–վում Համոյի «Տե-շեստի» մասին, անհապաղ հետևում էր սրտնեղած պատասխանը.

- Սատանի բանի ի ջանըմ, կես գիշերին կասի բարի լույս...

* * *

Մուրադ աղան՝ Շատախի կռիվների հրաշալի գիտակն ու տեսաբանը, պատմելու ընթացքում ծխախոտ փաթաթեց, ուշադրությամբ ու խնամքով ամրացրեց «մուզլուխի» (ծխամորճ) մեջ և վեր կենալով, ուղղվեց դեպի հորս գրասեղանը: Իր գործը լավ իմացողի հանգիստ վստահությամբ վառեց գրասեղանի վրա գտնվող լուսամփոփը, ծխամորճը բե–բանը տարավ և ... հակվեց լուսամփոփի էլեկտրական լամպի վրա ծխածոտը վառելու հա–մար...

Իսկ որովհետև մի քանի անգամ ջանասիրաբար փստփստացնելուց հետո, ծխախո–տը չվառվեց, Մուրադ աղան տարակուսանքով նայեց ներկաներին և ապա՝ հորս:

-Արշո՛, էս ... ինչի չի վառե:

Հայրս, հազիվ թաքցնելով ժպիտը, բացատրեց, որ էլեկտրական լամպը, ճիշտ է, ուժեղ լույս է տալիս, բայց թուղթ չի կարող վառել:

-Չեմ հասկնա, էս կրակ չի՞:

Հայրս դարձյալ ինչ-որ բացատրություններ տվեց:

-Ախպեր, թերթերաց մեջ կգրեն, որ էս, – ցույց տվեց լամպը, – հիսուն-վաթսուն ան–գամ մեր ճրագից ուժեղ ի: Բա ո՞նց չի վառե:

Կրկին հաջորդեցին հորս բացատրությունները:

-Սաքի՝ էս լույս ղալբ ի:

-Չէ, ինչու է կեղծ, Մուրադ աղա, - լույսի փոխարեն վիրավորվեց հայրս, – Պարզա–պես սա քո իմացած ճրագից չի, էլեկտրական լույս է, իսկ էլեկտրականությունը...

Մուրադ աղան լսեց, լսեց, ապա հիասթափված ավելացրեց:

-Ջանըմ, իսոնց լույսն էլ ղալբ ի...

* * *

Հիշատակության արժանի այլ դեպքեր էլ: Երկրային հրաշքների կարգն էր դասվում Երևանի Տեր-Ավետիքովի գործարանը, որովհետև այնտեղ «գործիք կա, որ երկաթ կկտրի»:

Վանի ու Շատախի մոտ գիտունիկի անուն ունեի, քանի որ Թուրքիայի քարտեզի վրա կարողանում էի ցույց տալ նրանց նշած բոլոր քաղաքները, այսինքն՝ 10-12 անուն...

Քառասուն տարի հազիվ է անցել այդ ժամանակվանից. 1500 տարվա անցյալ ունե–ցող ժողովրդի պատմության մեջ՝ ակնթարթից էլ մի փոքր տևողություն: Եվ հաճախ հարց եմ տալիս ինձ, ինչ պահանջվեց այս հեքիաթային վերելքն ավահովելու, այսօրվա ապշե–ցուցիչ մակարդակին հասնելու համար:

Դրա համար պահանջվեց հիսուն տարի և Սովետական Իշխանություն...

Երեկոյան Երևան

1970, նոյեմբերի 24, № 275